ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1994 թ. օգոստոսի 30-ին, ժամը 11-ին, Վեհարանում տեղի ունեցավ Գերագույն Հոգևոր Խորհրդի ժողով, նախագահությամբ Կաթողիկոսական նորընտիր տեղապահ, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի:

Նիստին ներկա էին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ Տ. Գարեգին Պատրիարքը, Տ. Վաչե, Տ. Ներսես, Տ. Արսեն, Տ. Գրիգորիս, Տ. Գարեգին, Տ. Խաժակ արքեպիսկոպոսները, Տ. Պարգև եպիսկոպոսը, տիարք Գրիգոր Խանջյանը, Հակոբ Փափազյանը, Պիոն Հակոբյանը, Ռաֆայել Պապայանը և քարտուղար Պարգև Շահբազյանը: Նիստին հրավիրված էր «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիր Տ. Ասողիկ եպիսկոպոսը:

Օրակարգի կարևոր հարցերն էին.

1. Եպիսկոպոսաց և ԳՀԽ միացյալ ժողովի ատենագրության ընթերցում տեղապահի ընտրության մասին.

2. Ազգային-Եկեղեցական ժողովի գումարման ուղեցույց.

3. Տնտեսա-ֆինանսական հանձնաժողովի հաշվետվության տեղեկատվություն.

4. Վեհափառի աշխատասենյակի գույքագրում:

Ժողովը բացվեց Տ. Գարեգին Պատրիարքի արտասանած «Հոգւոց» աղոթքով, վասն նորոգ ի Տեր հանգյալ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա.-ի հոգվո:

Ապա Ազգային-Եկեղեցական ժողով գումարելու ուղեցույցին առնչվող հարցերի շուրջ հանգամանալից խոսեց Ժողովի նախագահ Կաթողիկոսական տեղապահը:

Ժողովը անցավ գործնական մթնոլորտում:

Որոշվեց հաջորդ նիստը գումարել 1994 թ. սեպտեմբերի 29-ին, ժամը 18-ին:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Ս. Էջմիածին,
2 սեպտեմբերի 1994 թ.